

ւանդուի, անխոնջ և ամուր արօրին տակ, քրքա- նաջան մշակին համբերութեամբ, վերջապէս կու- ծի, ծաղկի, պտղաբերէ և անուցանէ:

Եւ մշակն մշակաց, սրուն ագարակն է բոլոր աշխարհս, պատուիրեց մաճակալին¹, շիտակ գծել ու քշել, և ետև չնայիլ. երթալ յառաջ, և շիտակ երթալ: Ո՛հ. երթալ և լալով, եթէ հարկ է, երթալ և ցանել. կու հասնի օրն ալ խըն աալով հնձեղու, որաներով շարկած, ծաղկինե- րով պսակուած դառնալու²:

Ճամբրիտ հայրենասիրութիւնն չէ ասուպ կամ փայլակ մը յանկարծ երևցող և անցնող. ոչ հուր մոլի և թափառիկ, և ոչ կայծակն անկուշտ այ- րող լափող. այլ հանգարտ քերմութիւն մը, յըս- տակ լուսով, անստգիւտ խղճով:...

Ո՛վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասի- րութիւն. դու պատրաստէ, վառէ սրբէ զսիրտ Հայկակայ: Քեզմով վառուած սիրան՝ անխայթ և անմոլի լոյս կ'արձակէ. և եթէ խարկի մըրկի սիրուն, և անցնի երկրաւոր մասամբն, երկնու- նակ մասն՝ մնայ 'ի վերայ հայրենեաց, որպէս հոս մըրկի և կնգրբի:

Եւ շատ սեղաններ, շատ տապաններ, շատ քա- րեր ու հողեր կան 'ի Հայաստան, ուսկից դարէ դար և անդադար կու ծխէ հոսն անուշութեան, հոսն հայրենեաց. զոր չեն կրնար ջնջել ոչ զէնք և ոչ քէնք:

Վասն զի մեր առաքինի և ճմարիտ, ընկերա- սէր, ազգասէր, որդեսէր և հայրասէր նախնիքն, այն երկրին վրայ իրենց պարկեշտ նշխարքը թող- լով, անմահութեան շնչով վերէն անոր վրայ մշտ կու շնչեն և կու շրջնեն:

Նրնչեցէք ըվ շունչ մտաբացք, սրտարծարք, հոգեվառք. շնչեցէք հոգիք Գրիգորեանց, Ներսի- սեանց, Սահակեանց, Մովսիսեանց, Վեռնի- գեանց, Վարդանանց, Վահանանց, Սմբատաց, Աշոտաց, Լեւոնեանց և Հեթմեանց. սուրբ թա- դաւորք, հաջրապետք, վարիչք և վարդապետք Հայոց, շնչեցէք յերկնից յերկիր: Թառնուի՜ ձեր երկնաւոր շունչն՝ յերկրաւոր շունչ Հայկակայ. որ երբ հասնի աւանդելու իր վերջին շունչն ալ՝ եթէ հանգարտ ու հեզիկ, և եթէ հրահատ ու հառաչաձայն, հաւասարապէս խառնուի՜ ձերի- ներուն հետ:

Եւ երբ իր օրական և տարեկան շրջաններուն պէս՝ երկիրս իր բազմադարեան շրջանն ալ աւար- տելով՝ գազարի և կտորի, և նոր երկրի մը հրաւի- րակ փողն հնչէ, այս հին լուծեալ և լքեալ եր- կրիս վերջին արձագանգաց միջէն՝ վերջնագոյն ար- ձագանգ մ'ալ ըլլայ քուկդ, սուրբ սէր հայրե- նեաց:...

Եւ, ո՛հ, թէ այն խորին և լուին արձագանգաց՝ նուազ վանդիւն մ'ըլլար այս իմ քեզի նուիրածս, Հայկակ, ՅՈՒՇԵԿԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ:

¹ Ղուկաս, Թ. 62: ² Սաղմոս ձԻԵ. 6:

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տէս երես 90)

Երկրորդ օրը, 21 փետրուարի, ա- ռաւօտեան ժամը իրեքին, շոգենաւուն կրակարանները կ'աղմկէին. ժամը հինգին խարխիւր վեր առնուելով՝ Բիզո- յիւղ իր պտուտակաւոր անուին զօրու- թեամբը, դէպ 'ի Թայմզին բերանը յա- աջեց:

Պէտք չկայ ըսելու որ նաւուն վրայ եղած խօսակցութիւնները բոլորը տղ- զոր Ֆէրկըսընի արշաւանքին վրայօք էին: Զինքը տեսնողը և իրեն խօսքե- րուն մտիկ ընողը՝ անանկ վստահու- թիւն մը կը ստանար, որ շուտ մը, բաց 'ի Սկովտիացիէն, ոչ ոք կը տարակու- սէր որ իր ձեռնարկութեանը մէջ պի- տոր չյաջողի:

Ճամբորդութեան անդադ ժամե- րուն ատեն, տղքորը սպայից խումբը չորս դին ունենալով, կատարեալ դա- սախօսութիւն մը կ'ընէր աշխարհա- գրութեան վրայ: Այն երիտասարդ- ները կ'ոգևորէին անոր քառսուն տա- րիէ 'ի վեր Ափրիկէի մէջ ըրած գիւ- տերուն վրայ, կը պատմէր անոնց Պար- թի, Պրդընի, Սբիեր և Կրէնդի խուզ- արկութիւնները, կը նկարագրէր ա- նոնց այն խորհրդաւոր աշխարհը ինչ- պէս բաց ամենուստեք՝ գիտութեան քննութեանցը: Հիւսիսակողմը, երի- տասարդն Տիւվէյրիէ խոյզ և խնդիր կ'ընէր Սահարան, ու թուարեկաց զը- խաւորները Բարիզ կը տանէր: Գաղղիոյ տէրութեան հրամանաւ երկու արշա- ւանք կը պատրաստուէին, որ մէկը հիւ- սիսէն իջնելով, միւսը արեւմուտքէն գա- լով՝ Թոմպուքտու պիտոր հանդիպէին: Հարաւէն, անխոնջն Լիվինկսդըն միշտ դէպ 'ի հասարակած կը յառաջադիմէր, և 1862ին մարտ ամսէն 'ի վեր, Մա- քէնզիի ընկերութեամբ Ռովուսիա դե-

տը կ'ելլէր: Անտարակոյս իննևտաս-
ներորդ դարը չանցնէր պիտոր, առանց
մեզի ծանօթացնելու Ափրիկէին ծոցը՝
վեց հազար տարիէ 'ի վեր ծածկուած
գանձերը:

Սակայն Ֆէրկըսընի ունկընդրաց հե-
տաքրքրութիւնը այն ատեն գրգռեցաւ
գլխաւորապէս, երբ իր ճամբորդութեա-
նը պատրաստութեանց վրայ մանրա-
մասն տեղեկութիւններ տուաւ, ուղե-
ցին անոր հաշիւներուն ճշդութիւնը
քննել. սկսան անոնց վրայ վիճել, և
տոքոքորը համարձակ վիճաբանութիւնը
շարունակեց:

— Այդ գործը ձեր զարմանքը կը
գրգռէ, պատասխանեց Ֆէրկըսըն:

— Անտարակոյս:

— Այլ որչափ ատեն կ'ենթադրէք
որ ճամբորդութիւնս տեւէ: Ամբողջ ա-
միսներ: Մեծ վրիպակ մըն է. եթէ շատ
երկայն երթար, կը կորսուէինք, չէինք
կրնար դառնալ: Գիտցէք ուրեմն որ
Զանդիպարէն մինչև Սէնէկալի ափուն-
քը՝ երեք հազար հինգ հարիւր, կամ
չորս հազար¹, ըսեմ, մղոնէն աւելի
չկայ: Արդ, առ իւրաքանչիւր տասու-
երկու հարիւր քառասուն մղոն² ընելով,
որ երկաթուղեաց սրընթացութեանը
չմօտենար, գիշեր ցորեկ ճանապարհոր-
դելով, եթէ օր բաւական է Ափրիկէն
քալել անցնել:

— Բայց այնպէս որ ըլլայ՝ բան մը
չկարենաս պիտոր տեսնալ, ոչ աշխար-
հազրական գծադրութիւններ կարե-
նաս պիտի ընել, և ոչ աշխարհը կա-
րենաս պիտի ճանչնալ:

— Այլ, պատասխանեց տոքոքորը, ե-
թէ գունտիս տէր ըլլամ, եթէ ուղա-
ծիս պէս կարենամ ելլել իջնել, երբ
արժանի կը դատեմ կանկ կ'առնում,
մանաւանդ երբ տեսնամ որ շատ բուռն
հողմոյ հոսանքներ զիս քշելու տանելու
փտանգ կը սպառնան:

— Եւ անանկ բուռն քամիներու հան-

դիպիս պիտոր, պատասխանեց Բէնէդ-
հրամանատարը. կան փոթորիկներ որ
առ ժամ՝ երկու հարիւր քառասուն մղո-
նէն աւելի կ'ընեն:

— Կը տեսնէք ուրեմն, ըսաւ դար-
ձեալ տոքոքորը, այդպիսի երազու-
թեամբ տասուերկու ժամուան մէջ կա-
րելի է Ափրիկէն կտրել անցնիլ, ըսել
է Զանդիպար անկողնէն ելլել ու Սուրբ
Լուդովիկոս երթալ պառկիլ:

— Սակայն, ըսաւ անդիէն սպայ մը,
կարելի է արդեօք որ օդապարիկ մը
այդպիսի երազութեամբ կարենայ քը-
շուիլ:

— Այդ բանը եղած ունի, պատաս-
խանեց Ֆէրկըսըն:

— Եւ օդապարիկը կրցեր է դիմա-
նալ:

— Այո, և շատ աղէկ: Նափուէոնի
թագադրութե ժամանակն էր 1804ին:
Կարներէն օդագնացը, Բարիզէն՝ երե-
կոյեան ժամը տասներմէկին՝ օդապարիկ
մը թռուց, որուն վրայ հետեւեալ ոսկէ-
գիր վերնագիրը կար. « Բարիդ, 25 ե-
ղեմնականին¹, ԺԱ՝ տարի, թագադրու-
թիւն կայսեր Նափուէոնի 'ի սրբազան
Պիոս Է »: Երկրորդ առաւօտն առաւօ-
տեան ժամը հինգին Հռոմայու բնա-
կիչքն նոյն օդապարիկը տեսան՝ որ վա-
տիկանի վրայէն անցնելով, բոլոր Հռո-
մայու գաւառը քալեց ու դնաց Պրա-
չիանոյ լիճը ինկաւ: Ուստի, պարոնայք,
օդապարիկ մը այդպիսի արագութեանց
դիմանալ կարող է:

— Օդապարիկ մը, կ'ընդունիմ. այլ
մանրդ մը, համարձակեցաւ ըսելու Քէն-
նըտի:

— Մարդ մըն ալ, այո. վասն զի օդա-
պարիկ մը միշտ անշարժ է իր շրջապա-
տող օդուն նայելով. ինքը չէ որ կը քա-
լէ, այլ բուն օդուն զանգուածը. ուստի
նաև նաւակիդ մէջը ճրագ մը վառէ, և
կը տեսնաս որ բոցը և ոչ կը խաղայ:
Օդագնաց ճանապարհորդ մը՝ որ կար-
նըրէնի դնտին մէջ գտնուէր, ամենևին
չնեղուեր պիտի այն երազութենէն:

¹ Գրէթէ 1400 փարսախ:

² Հարիւր փարսախ: Տոքոքորը միշտ աշխարհա-
գրական մղոններով կը հաշուէ, երթագրելով 60
մղոն առ աստիճան:

¹ Գեկտեմբերի 5:

Բայց ես, միտքս գրած չեմ այդպիսի երազութեան մը փորձը փորձել, և նաև եթէ գիշերները կարենամ ծառի մը կամ դիպուածական բարձրաւանդակ տեղւոյ մը կռուիլ՝ զանց պիտոր չընեմ։ Միւս կողմանէ հետերնիս երկու ամ սուան պաշար կը տանինք, մեր ճար պիկ որսորդն ալ վար որ իջնանք՝ արգելք պիտոր չգտնայ մեզի առատ որս հոգալու։

— Է՛հ, պարոն ֆէննըտի, ինչ վար պետ հարուածներ պիտի կշռես, կանչեց երիտասարդ ենթտեղակալ մը, նախանձու աչքերով Սկոտլանդիին նայելով։

— Առանց հաշուի առնելու նաև այն, ըսաւ ուրիշ մը, որ մեծ փառքով մը զուարճութիւնդ կրկնապատկի պիտոր։

— Պարոնայք, պատասխանեց որսորդը... շատ չնորհակալ եմ... ձեր ինծի ըրած մեծարանաց... սակայն չեմ կըրնար զանոնք ընդունիլ...

— Հէյ, կանչեցին ամենը, չերթա՞ս պիտոր դու ալ։

— Պիտոր չերթամ։

— Տղքդոր Ֆէրկըսընի չընկերանա՞ս պիտոր։

— Ոչ թէ միայն չընկերանամ պիտոր իրեն, այլ և եթէ հոս կը գտնուիմ՝ անոր համար է որ մինչև ետքի վայրկեան ջանամ զինքը երթալէն արզիլելու։

Ամենուն աչքը դէպ 'ի տղքդոր դարձան։

— Իրեն մօտիկ մ'ընէք, ըսաւ իր սովորական հանգարտ կերպովը։ Ատոր վրայ հետը վիճելու չէ. վասն զի իրապէս զիտէ որ հետս պիտոր գայ։

— Ս. Պատրիկ վկայ, կանչեց ֆէննըտի, կ'երդնում...

— Բանի մը վրայ մ'երդնուր, բարեկամ Տիք, դու չափուած կշռուած ես, դուն ալ, վառօդդ ալ, հրացաններդ ալ ու նաև զնտակներդ. ուստի ալ ասոր վրայ չխօսինք։

Եւ յիշաւի այն օրէն սկսեալ մինչև որ Զանգիպար հասան, Տիք մէյ մըն ալ բերանը չբացաւ. ալ ոչ ասոր վրայ խօսք ըրաւ և ոչ ուրիշ բանի վրայ. բոլորովին լռեց։

Կը շարունակուի։

Ս.ՄԱՐՍԱՏՈՒՆ ԼԻԻԱՅ

ՄԵՐՁ Ի ՀՌՈՎՄ

Հռովմայ դռներէն մէկէն դուրս՝ որ Դուռն ժողովրդեան կը կոչուի, Տիքեր գետին վրայ Մոլլէ անուամբ կամուրջ մը ձգուած է, որուն հիմունքը Մարկոս Եմիլիոս Սկաւրոս ձգած է Հռովմայ շինութենէն 700 տարի ետքը, անունը կամուրջ Միլիթոյի դնելով։ Կամուրջը անցնելով և յաջ դառնալով և փլամինիա ըսուած ճամբէն անցնելով այցելուն շուտ մը այն տեղը կը հասնի ուր Կոստանդիանոսի ընդ Մաքսենտոսի հռչակաւոր պատերազմն եղաւ։ Հոն ընդառաջ կ'ելլայ անոր վալէա անուամբ գետակ մը, որ Գրեմոր գետին նախասկիզբն է, պատմական մեծ յիշատակ, որուն գետափանց վրայ մեռան 300 փարիսեանք քաջութեամբ պատերազմելով Ետրուրացւոց դէմ, Հռովմայ հիմնարկութենէն 275 տարի վերջը և ֆրիստոսէ 477 տարի առաջ։ — Հոն այցելուին աջակողմը դեղնագոյնն Տիքեր կը հոսէ, և ձախակողմը քանի մը ժայռեր կ'ամբառնան՝ որ իրենց գունոցը համար հիններէն կարմիր ժայռք կ'անուանէին. իսկ գետոյն հանդէպ Սարինեան լեռները կը բարձրանան։

Ճամբուն այն տեղը ուր մընաչափ քարը Հռովմէն եօթը մըն հեռաւորութիւն կը նշանակէ, ճամբան երկու կը բաժնուի, մէկը դէպ 'ի ձախ՝ որ 'ի Դոսգանա կը տանի, ժայռերուն քովէն անցնելով, իսկ միւս աջակողմեանը Տիքերեան ճամբուն հետ կ'երթայ կը միանայ։ Այս երկու ճամբաներուս մէջ բարձրութիւն մը կայ՝ որ Տիքերի վրայ կը նայի և որուն ստորոտը ցան ու ցիր տուններ կը տեսնուին։ Այս տեղւոյս անունն է Առաջին Դուռն։

Այս բլրոյս վրայ նոր ճարտարապետութեամբ շինուած տուններ ալ կան. կը տեսնուին դարձեալ մանաւանդ ձախակողմը՝ հին նախնի շէնքերու հիմունքներ, արդ փլայատակք, բայց կ'իմացուի որ մեծակառոյց և հրաշակերտ